ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2023-4-2-Ա

ք. Երևան 31.03.2023թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2023 թվականի մարտի 31-ի նիստում քննարկեց 2023 թվականի փետրվարի 28-ին հայտատուի ներկայացուցիչ Շուշանիկ Վարդանյանի կողմից ներկայացված՝ Անահիտ Լևոնի Ղարիբյանի (Կոտայքի մարզ, գ. Քասախ, Մուշի 10, տուն 18, AM) «Aregi» (No20210108) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.
«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և 2-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն որպես ապրանքային նշան գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ՝ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը: Տվյալ դեպքում հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման, քանի որ այն շփոթելու աստիճան նման է 29-րդ և 30-րդ դասի ապրանքների համար գրանցման հիման վրա պահպանվող ավելի վաղ «Արեգ» («Հայր և որդի Ավագյաններ» ՍՊԸ, Երևան, Դ. Մալյան 20, բն. 48, N 12446, 01.02.2008), 33-րդ դասի ապրանքների համար «ԱՐԵԳ ARET AREG» («Տավինկո» գինու-կոնյակի գործարան ՍՊԸ, Արարատի մարզ, գ. Տափերական, Պ. Սևակի 51, N 24472, 10.05.2016) և «Հին Տոմար Արեգի» («Աստաֆյան հոլդինգ» ՍՊԸ, Երևան 0068, Մալաթիա-Սեբաստիա, Կուրղինյան փող., շ. 27/26, N 18474, 06.06.2012) բառային և համակցված ապրանքային նշաններին: ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 10-ի N 1017-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի 122-րդ կետի, 124-րդ, 130 -րդ կետի 1-ին և 2- րդ ենթակետերի համաձայն, համակցված ապրանքային նշաններին նման կարող են լինել համակցված ապրանքային նշանները և ապրանքային նշանների այն տեսակները, որոնք որպես տարրեր ներառված են ստուգվող համակցված ապրանքային նշանի մեջ: Տվյալ դեպքում՝ չնայած, որ համեմատվող նշանները գրված են տարբեր լեզուներով,

նրանք ունեն ձայնային և իմաստային նմանություն և զուգորդվում են միմյանց հետ իրենց բառային գրառումներով՝ Արեգ, Areg(i), իսկ Արեգի-ն Արեգ-ի հոլովված տարբերակն է, որն էլ կարող է առաջացնել շփոթություն միջին սպառողի շրջանակներում:

Կոլեգիայի նախագահը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները և առաջարկեց լսել հայտատուի ներկայացուցչին՝ հարցի վերաբերյալ հավելյալ մանրամասներ ներկայացնելու համար: Հայտատուի ներկայացուցիչը ներկայացրեց բողոքում նշված մանրամասները և այն տեսակետը, որ մերժված ապրանքային նշանը իր պատկերային մասով շփոթելու աստիճան նման չէ հակադրված ապրանքային նշաններին: Հնչեցին տարբեր կարծիքներ ներկայացված և հակադրված ապրանքային նշանների շփոթելու աստիճան նման լինելու վերաբերյալ: Բողոքարկման խորհրդի անդամների մեծ մասը համաձայն էին հայտատուի ներկայացուցչի կարծիքի հետ, որ մերժված և հակադրված ապրանքային նշանները շփոթելու աստիճան նման չեն:

Բողոքարկողը համաձայն էր ձևավորված նախնական կարծիքի հետ:

Նիստի ժամանակ փորձաքննության բաժնի պետը նշեց, որ փորձաքննության կայացրած որոշումը իրավաչափ է և հայտարկված ապրանքային նշանը ենթակա է մերժման:

Ամփոփելով ընդհանուր քննարկումը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2022 թվականի մայիսի 6-ի N774-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհրդում բողոքների, դիմումների և առարկությունների քննարկման կարգի» 70-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը քվեարկության արդյունքում 5 կողմ և 2 դեմ ձայների հարաբերակցությամբ.

Ո Ր Ո Շ Ե Ց

Հայտատուի ներկայացուցիչ Շուշանիկ Վարդանյանի կողմից ներկայացված՝ Անահիտ Լևոնի Ղարիբյանի «Aregi» (No20210108) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքն ամբողջությամբ բավարարել, կրկնական փորձաքննության որոշումն ամբողջությամբ չեղյալ ճանաչել և ապրանքային նշանը գրանցել:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ ՌԱՖԱՅԵԼ ԳԵՎՈՐԳՅԱՆ